ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԶՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

04 -08-2016 թ.
N- 080

գ. Զրառատ
Հեռ. 093-70-40-77

ՀՀ Շիրակի մարզպետ
պարոն Հ. Սիմոնյան

Հարգարժան մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Զրառատ համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 28-ի չորրորդ նիստի թիվ 14-Ա, թիվ 15-Ն որոշումները: Առդիր 3 թերթ:

Հարգանքով՝

Ահ. Ոսկանյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹՂԹ
Մուտք թիվ 8014-16
«04» 08 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 14-Ա

«28» հուլիսի 2016 թվական գյուղ Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 28.1-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 12-ի թիվ 45/9 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրառատի գյուղական համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրառատի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի, որով նախատեսվում է համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականությունը հանդիսացող 0.04 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտը /կադաստրային ծածկագիրը՝ 08-097-0210-0012/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կապի գործառնական

նշանակություն՝ «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից այդ հողամասում տեղադրված շարժական կապի բջջային կայանի գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրառատի գյուղական համայնքի ղեկավար Ահարոն Ոսկանյանին՝

1) ապահովել հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ _____

ՄԻՍԱԿ ԳԱԼՈՅԱՆ՝ _____

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ՝ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

« 28 » հուլիսի 2016 թվական
գյուղ Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 15-Ն

28 հուլիսի 2016թվական գյուղ Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 62-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրառատ համայնքի ավագանու 2015թ դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջրառատ համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 19-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1.Համայնքի վարչական բյուջեյի պահուստային ֆոնդից 198.0 հազար դրամ ուղղել համայնքի վարչական բյուջեով չնախատեսնված ծախսերի ֆինանսավորմանը,այդ թվում

1)Բաժին 11 խումբ 1 դաս 2 ծրագրի <<Տեղեկատվական ծառայություններ >> հոդված 4234 տողի <<0>> թիվը փոխարինել <<48.0 հազար դրամ>> թվով և բառերով:

2)<<Այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդված 4639 <<0>> թիվը փոխարինել <<150.0 հազար դրամ>> թվով և բառերով :

Ջրառատ համայնքի ավագանու անդամներ

Կողմ՝(3) Դեմ՝(0) Ձեռնպահ՝(0)

ՎԱԼՈՂՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ----------

ԱՐԹՈՒՐ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ----------

ՄԻՍԱԿ ԳԱԼՈՅԱՆ ----------

ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ՈՍԿԱՆՅԱՆ

28 հուլիսի 2016թվական
գյուղ Ջրառատ